

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

(Մատարագաբաժինը գինում են ուղղակի
Խախտ. Редакція „Маск“)

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տեղական թատրոնի գործը.—Ներքին տե-
սու թիւն: Նամակ կրեանից: Նամակ բազուկից:
Նամակ խոր-խաղաղէտից: Նամակ Ալեքսանդրա-
պոլից: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: Ար-
տաքին տեսու թիւն: Անգլիական պարա-
մունտ: Թիւրքիա: Բերկին կոնֆէրէնցիա: Նամակ
Թիւրքիայից:—Յայտարարութիւններ:

ՏԵՂԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Յունիսի 11-ին մենք ներկայ
գտնվեցանք Երծրունու թատրո-
նում վրաց մշտական խմբի ներ-
կայացմանը: Խաղում էին Լ.
Շերետեիի «Կլնտո» պիէսան:
Մենք նպատակ չունենք բնեւ
այստեղ պիէսայի բովանդակու-
թիւնը, ցոյց տալ նրա արժանա-
ւորութիւններն ու պակասութիւն-
ները, միայն այսքան կասենք, որ
ընդհանուր տպաւորութիւնը, որ
մենք դուրս բերեցինք ներկայա-
ցումից, շատ գոհացուցիչ էր:

Հասարակութիւնը, մանաւանդ
երեսուն կոպէկանոց տեղերի հա-
սարակութիւնը, հասարակ մար-
դիկ, մեծ գուարճութիւն էին
գտնում բեմի վրա իրանց ծանօթ
տիպերը տեսնելու, իրանց համար
հասկանալի, մատչելի լեզուն, ի-
րանց սրտին մօտիկ գաղափարներ
գերասանների բերանից լսելու: Ե-
րեւում էր որ պիէսան, տեղական
կեանքից վերցրած լինելով մեծ
ընդունելութիւն էր գտնում հան-
դիսականների մէջ...

Միայն այդ տեսակ կենդանի,
մեր սեփական կեանքից վերցրած
պիէսաները ճշմարիտ կրթիչ ներ-
գործութիւն կարող են ունենալ
հասարակութեան մեծամասնու-
թեան վրա:

Եկամայ մենք սկսեցինք համե-
մատել մեր մտքում այդ տեսակ
պիէսայի բեմի վրա երևալու ներ-
գործութիւնը, այն մեղմոցը բը-
նացող ներգործութեան հետ, որ
ունէր մեր հասարակութեան վրա
այս տարվայ հայոց մշտական
խմբի բեմադրութեանը, իր «Լիւսի
Դիդիէ», իր «Սէր առանց հա-
մարման» և ուրիշ այդ տեսակ
պիէսաներով, որոնց կեանքը, տի-
պերը, շարժվածքները, գաղափար-

ները, նոյն իսկ խօսակցութեան
ոճը և ձևը մեզ կատարելապէս
խորթ են:

Մինչև որ վրաց թատրոնա-
կան խումբը աշխատում է տե-
ղական կեանքից, ինքնուրոյն պիէ-
սաներ ներկայացնել, հայոց թատ-
րոնական կոմիտէտը, մեր կողմա-
սեան կեանքը, մեր ներքին հասա-
րակական խնդիրները թողնելով,
բերել է տունը Կ. Պոլսից ֆրան-
սիական բեմադրութեան ամենա-
հնացած պիէսաներ խաղացող դե-
րասաններ, իրանց անհամ բեմադ-
րութեան հետ միասին... Հասարա-
կութիւնը ներկայ է գտնվում ներ-
կայացումներին և ոչինչ չէ հաս-
կանում խաղացած պիէսայից: Կ.
Պոլսի լեզուն, օտար կեանք, օտար
և անբնական տիպեր, — ամեն բան
խորթ է նրա համար, ոչ մի
խօսք, ոչ մի գաղափար, ոչ մի
շարժվածք հանդիսականի սրտին
և ուղեղին մատչելի չէ: Հաս-
կանալի է որ այդ տեսակ թատ-
րոնական ներկայացումներ ոչինչ
կրթողական ներգործութիւն չեն
կարող ունենալ կողակսեան հայի
վրա:

Մեր թատրոնական կոմիտէտը
հարկաւորութիւն չունէր շտապե-
լու. կարող էր մի ամբողջ տարի
սպասել, պատրաստել բեմադրութեան,
մեր եղած բեմադրութեանը հաւա-
քել, յորդորել տեղական հեղի-
նախներին, որ նրանք գրեն տե-
ղական կեանքից վերցրած ինքնու-
րոյն պիէսաներ, վրաց լեզուից էլ
թարգմանել մի բանի գրութեանը,
հաւաքել գաւառներում ցիր ու
ցան եղած գրողներից իրանց հե-
ղինակութիւններ, — և ապա, մի
տարուց յետոյ հանդէս դուրս
գալ տեղական պատրաստ բեմադ-
րութեանը:

Բայց մեր թատրոնական գոր-
ծի ղեկավարները ոչ այն ժամա-
նակ կամեցան լսել և հասկանալ
մեր միտքը, որ արդէն շատ ան-
գամ յայտնած էինք, ոչ էլ այժմ
դառն փորձերից յետոյ խրատվե-
ցան...

Լսում ենք որ կոմիտէտի երկու
անդամներից մինը գնացել է Կ.
Պոլսի, կրկին այնտեղից մի բանի

դերասաններ և դերասանուհիներ
հրաւիրելու համար:

Ուրեմն եկող սեզոնին մենք
կրկին պատիւ կունենանք տեսնել
մեր բեմի վրա Կ. Պոլսի լեզուով
խօսող զանազան ֆրանսիացի մար-
կիզներ, դուքսեր, կոմսուհիներ և
այլն...

Ելողպէս է առաջնորդում մեզ
մեր ինտելիգենցիան և այսպէս
աննպատակ, անխիղճ կերպով վատ-
նում է հասարակական փողերը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

Մայիսի 8-ին

Անողոր սովը դեռ չէ դադարում իր մահաւա-
րած գերանդին մեր թշուառ եղբայրակիցներով
տնկում դաշտի վրա շարժելուց, դեռ չէ
կլտանում անողորմ մահ սիրելուց առանց
այն էլ դարերի ընթացքում շատ տանջանքների
տակ ճնշված ու ծալված թիւրքաց Հայաս-
տանի, մանաւանդ վասպուրականի վրա, որը ներ-
կայումս այնպիսի մի արտաճակիլ գրութեան մէջ
է, որ միայն արդարեւ անգագաները և անսիրտները
սառնասրտութեամբ կը նայեն նրա վրա, մարդ-
կային փափուկ զգացմունքներից զուրկ անհատ-
ները ցուրտ անտարբերութեամբ կը նայեն այն
սեւափոր գերեզմանին, որ սովը է քանդում վատա-
բաղու մեր եղբայրակիցներին յաւիտեան կանխու-
համար...

Խիղճը, փափուկ զգացմունքը, մարդասիրութիւ-
նը մեռած են բոլորովին այն հարուստների սըր-
տերում, որոնցից շատ սահմանափակ թիւը իր մի
շարժումներով կարող էր փրկել թիւան լոյս ծագել
մահաբեր փրկիչներով փոթորկած վասպուրականի
հորիզոնի վրա, իսկ ընդհակառակը այդ վառ յատ-
կութիւնները, կարծես, արթուն են այնպիսիների
մէջ, որոնք ունեն ցանկութիւն, կամք, բայց, աւագ,
չունեն միջոց սովի այդ ստնկալի պատճառի դէմ
ղիմադրելու...

Թող սովակատող հայրը իր սիրասուն որդու
միւս ուսով, թիւը թէկուզ ողջ վասպուրականը
սովածած լինի, միայն թէ մեր աղաների ժանգոտ
սրտների մէջ թաղված կոպէկները՝ ժանգոտ տի-
րօջ հետ անբաժան մնան...

Այդ անգոր ու տկար օգնականներից մինն էլ
այսօր Երևանի Գայիանեան ուսումնարանն է
դառնում, որ շտապում է իր ամենաշնչին լուծան
զցիլ վասպուրականի հայութիւնը ապրեցնելու
գանձանակում:

Ուրեմն, մեծագոյ խմբագիր, լրագրող եւ որ
քաղցր ներութիւն անձին կը համարէք սորա միջի
ներփակուած մի հարկու և եօթն ռուբլի, որ կա-
մաւորապէս հանգանակվեց մեր ուսումնարանում,
հասցնել ուր հարկն է: Ահա նուիրատու հոգաբար-
ձուհիներ, տեսի, որ, օգնականութիւնների, ուսու-
ցիչների և աշակերտութիւնների ցուցակը. Ս. Մաղա-
թեանց 3 ռ., Ա. Թայրեանց 10 ռ., Ա. Եղիազար-
եանց 3 ռ., Յ. ա. ք. Միկեանց 10 ռ., օր. Ս.
Տէր-Աստուածաբանաց 2 ռ., օր. Փառանձեմ 2 ռ.,
օր. Ե. Տէր-Մարութեանց 2 ռ., Պ. Ա. Սիմեոնեանց
6 ռ., Ա. Միկեանց 3 ռ., Ս. Խաչատրեանց 2 ռ.,
Վ. Խուզարեանց 10 ռ.: Աշակերտութիւններ, Ն.
Յարութիւնեան 2 ռ., քոյրեր Միկեանց 2 ռ., Ս.
Դադանեանց 2 ռ., քոյրեր Դադանց 2 ռ., Չ. Մե-
կան 1 ռ., Բ. Տէր Խաչակեան 1 ռ., Ե. Պապի-

կեան 1 ռ., Ս. Կարապետեան 1 ռ., Շ. Թեոսեան
1 ռ., Ա. Գալիկեան 1 ռ., Մ. Տէր-Խաչակեան 1
ռ., քոյրեր Յովհաննիսեանց 1 ռ. 50 Կ., Ա. Միկե-
անց 1 ռ., Թ. Աւետիսեան 1 ռ., Մ. Արթուր-
եան 1 ռ., քոյրեր Եղեազարեանց 2 ռ., Ե. Պե-
րոսեան 50 Կ., Մ. Աղաջանեան 1 ռ., Փ. Կաս-
պարեան 40 Կ., Թ. Միկեանց 2 ռ., Ե. Խուզա-
րեանց 1 ռ., քոյրեր Յոսեանց 1 ռ., Ե. Արզա-
րեանց 1 ռ., Ա. Պողոսեանց 1 ռ., Մ. Պապիկեանց
1 ռ., Փ. Չանիբեկեանց 1 ռ., Մ. Խորասանեանց
1 ռ., քոյրեր Աֆրիկեանց 2 ռ., Թ. Վուրբանեան
1 ռ., քոյրեր Շահխաթունեանց 2 ռ., Պ. Պա-
շեանց 50 Կ., Ս. Տէր-Գրիգորեանց 1 ռ., Զ. Թա-
ղանտեանց 1 ռ., Շ. Գէորգեանց 1 ռ., Յ. Թով-
հաննիսեանց 50 Կ., Պ. Գեանդարեանց 40 Կ., Ս.
Բոչարեանց 1 ռ., Վ. Պապաշանեան 40 Կ., Զ.
Յարութիւնեանց 40 Կ., Վ. Գուկասեանց 25 Կ.,
Մ. Վարդանեանց 20 Կ., Ս. Մարտիրոսեանց 20
Կ., Մ. Թադեոսեան 15 Կ., Ի. Գէորգեան 30 Կ.,
Շ. Աղիբեկեան 40 Կ., Ա. Տէր-Ստեփանեան 20 Կ.,
Խ. Միկեանց 60 Կ., Ս. Սարգսեան 1 ռ.: Ա-
ւելացնելով այս ամենի վրա և իմ կողմից 9 ռ.,
ընդամենը ուղարկում եմ մի հարկու եօթն ռուբլի,
դուրս գալով իննսուն կոպէկ ճանապարհածախը:
Վարժուհի նոյն ուսումնարանի օր. Եղ. Ալի-
խանեան

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

4 յունիսի

Մի միտք վազուց է արդէն տանջում էր ինձ,
այն է որ մենք աւետարանական հայերս, ստորա-
դրված լինելով Մօսկվայի լուծիբական, դերասնա-
կան կոմիտատիային, ակամայ եմքարկված ենք
նրա անտարբերութեանը դէպի մեր մայրենի լե-
զուն: Մինչդեռ այդ միտքը իմ ուղեղիս մէջ ձե-
ւակերպվելու և հասունանալու վրա էր, ահա
յանկարծ ստացանք «Մշակ» № 82, որի մէջ
տպված էր «Նամակ Ս. Պետրբուրգից»:

Թէ ով է այդ նամակի հեղինակը, ես չեմ գի-
տեմ, միայն կասեմ որ նրա յայտնած միտքը մեր
ամենասիրելի մտքերի արձագանքն է կարծես:
Մենք փափաղում էինք միշտ մի հայ հովիւ ու-
նենայ, որպէս զի հասկանալով նրա մեզ քաղո-
ղածը, որպէս զի մեր գաւառները ուսանելի նրա
բերանից կըրնի սկզբունքները իրանց համար հաս-
կանալի, մայրենի, հայոց լեզուով, բայց ահա ի-
մացանք որ կոմիտատիան ուղարկում է մեզ մի
պաղպղ հովիւ, մեր գաւառներին համար մի պաղ-
պաղ վարժապետ: Մինչև այժմ մենք չունէինք և
ոչ մի հովիւ, և ոչ մի վարժապետ. թէ քանի, մեծ
մեծ, անդին տարիներ խլիքեան մեզանից, քանի
ժամանակ մեր գաւառները մնացին քաղաքային
մեռացած, զուրկ դպրոցական ուսումից և հոգեւոր
դաստիարակութիւնից, — պատմել կարելի չէ: Այդ
բոլոր զանազանութիւնները ժամանակով կը մի-
կեն:

Բայց անկեղծ և պարզ խոստովանվեք, այս
զանազանութիւնների մէջ առաւելապէս մենք ինք-
ներս ենք մեղաւոր: Մենք ենք թափանցեցինք,
ենք խնդրեցինք, ենք բոլոր ջանք գործ գրինք,
որպէս զի տան մեզ մի հայազգի հովիւ, մի հա-
յախօս ուսուցիչ: Երբ մենք նորից ուղեցինք մե-
զանից մի խնդրատու պատգամաւոր ուղարկել Ս.
Պետրբուրգ, որպէս զի բարձրագոյն կառավա-
րութեան առջև աշխատի ներկայացնել մեր ամե-
նախոնարհ խնդրքը, արդեօք այս մասին Շահա-
խանց մի արձագանք եղաւ: Կարծեմ ոչ: Երբ
ներք այդ մասին մեր Շահախան եղբայրներին:

Չը գիտենք Բագրու համար պատրաստվող պատ-
ուրը ուր մնաց, որ պատուով շիւղ մանի խոստ-
ման նայելով պէտք է ապրիլին տեղա լինելու: Ահա
յունիսն է և դեռ ոչինչ լուր չունենք նրա գա-
լու մասին: Ո՞վ գիտէ, գոցեց այդ պատուին էլ
ընացած է Ս. Պետրբուրգ կամ Մօսկվա և այն-

տեղից պէտք է վերադառնայ: Մենք ուրա-
խանում էինք որ ինչ և իցէ, դոնէ մի պատ-
ասօր կունենանք. իսկ այժմ մի կողմից դրա ու-
շանալը, և միւս կողմից Վաշակի Ս. Պետերբուր-
գի թղթակցից տուած լուրը մեր բոլոր յայտնը
կտրեց:

Մեր Պետերբուրգի բարեկամը մեզ խորհուրդ է
տալիս, որ մենք հայ-աւետարանականներն աշխա-
տենք խնդիրը տալու, որպէս զի անկախ դառ-
նանք Ս. Պետերբուրգի կամ Մոսկովայի գերմանա-
կան, բողոքական կօնսիստորիայից, մեզ համար
իրաւունք խնդրենք մեր հայ-աւետարանական կօն-
սիստորիան ունենալ Անդրկովկասում, ինչպէս որ
հայ-կաթօլիկները իրանց համար իրաւունք են խն-
դրում այժմ անկախ դառնալ Սարատովի եպիս-
կոպոսից և իրանց սեփական հայ-կաթօլիկ եպիս-
կոպոսութիւնն ունենալ Անդրկովկասում:

Մեր բարեկամի մեզ տուած խորհուրդը որքան
համակրելի է, այնքան էլ, եթէ չստան անիրազոր-
ծելի, դոնէ զփօտար իրազործելի է: Բայց դոնէ
մենք համար իրաւունք խնդրենք, ազգով հայ լինե-
լով, հայ-աւետարանական քարոզիչ և հայ ուսու-
ցիչ ունենալու: Եւ այդ իրաւունքը, որքան ինձ
յայտնի է, ոչ ոք էլ չէ խել մեզանից երբէք:
Իմ կարծիքս այն է որ մենք դարձեալ և դար-
ձեալ այդ մասին խնդրենք, աղաչանքներ պէտք է
ներկայացնենք մեր թէ կովկասեան և թէ կեն-
տրօնական բարձրագոյն իշխանութիւններին, հետե-
ւելով այդ կողմից մեր հայ-կաթօլիկ եղբայրների
գովելի օրինակին:

Հայ-Աւետարանական

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷԿԻՑ

17 մայիսի

Վաշակի 19-րդ համարի ներդրութեան ներքոյ,
Նոր-Բայազէզում պ. Ղազար Ղազարեանցը, զԷր-
դված մարդասիրական զգացմունքից, բաց արա-
ստորադրութիւն, վաղ մեր սովատանջ եղբայր-
ներին օգնելու մտքը, որից դուրսացած 137 ր. 7 կ.
ուղարկեց Վաշակի խմբագրութեանը: Դրանով պ.
Ղազարեանցը չէ վերջացրել իր հանգանակութիւ-
նը, այլ սկսեց շարունակել նորան, բայց մի ուրիշ
նպատակաւ, այն է խրկման սրբազան Հայրիկի
ձեռնարկած հիւանդանոցին օգնելու: Ստորագրու-
թիւնը յաջող է գնում, դէպք որ մեր ժողովրդի
անտարբեր դասին հրաւիրում ենք չը նայել սառն
աչքերով, այլ օգնել որչափ կը ներէ իր ուժը, կամ
աւելի լաւն ասած, կամքը, փող հաւաքելը, պէտք է
ասած, ունի և իր դժուարութիւնները. իւրաքան-
չիւրի մէջ, առաջարկութիւնը անկախ, չէք դատ-
նում պատրաստակամութիւն, այլ պատահում էք
մերժումներ և դժգոհութիւններ իւրեւ թէ իրան
ուզում են թալանել. այսպիսի անհամեմատ հետ
գործ ունենալը հարուածում է մարդասիրութեանը:
Ի նկատի առնելով հանգանակութեան այդ հան-
գամանքները, պ. Ղազարեանցի ձեռնակութիւնները
արդարեւ պատիւ են բերում նրան, որը բացի
դրանից, ինչպէս քաղաքական պրոստաւ, գովելի է
և իր պաշտօնական գործունէութեան մէջ, քա-
ղաքը նրա հոկոյութեան ներքոյ գտնուում է կա-
տարեալ ապահովութեան մէջ, շարագործութիւննե-
րը՝ այն եւ մանր, շատ քիչ, կամ հազիւ են պա-
տահում, այն էլ նրա հետադասութեամբ բաց-
վում են և ենթարկվում են դատաստանական պատ-
ժի: Այդպիսով պ. Ղազարեանցը վայելում է բո-
լորի յարգանքն և շնորհակալութիւնը, որն յայ-
տնում ենք հրապարակաւ: Չմեռն այս տարի ձիւ-
նոս և երկարատեւ լինելով, սպաւեց անասունների
պաշարը և մեծ հոգս պատճառեց ժողովրդին:
Աստուծոյ ցրտից Սևանայ լիճը, ձմեռվայ սկզբից
իր բոլոր տարածութեամբ սառել էր և բաց էր ա-
րել սահանակների հաղորդակցութիւն մի կողմից
միւս կողմը. սառուցի կտորվել տեսց մինչև
ապրիլի վերջերը: Սառնել Սևանայ լճի հետ ամեն
տարի չէ պատահում, այլ երբեմնայէս հինգ-վեց
տարին մի անգամ, սառում է փետրվարին, իսկ
կտորվում է մարտին:

Նայելով բուսաբանութեանը՝ յուսովի է որ
հունձը լաւ լինի և վերջ դնէ թանգութեանը, եթէ
անձրևներն էլ իրանց կողմից նպաստեն մեր
լեռնավայր հանդերձ, որոնք ջրաբերի չեն:
Այս օրս եկան Նոր-Բայազէզ ճանկաստանի
Բայազէզից երեք տուն նոր գաղթականներ. նրանք
պատմում են թէ հայ ազգաբնակիչները սովի
պատճառաւ տեղից խախտվելու և արդէն գործն
սկսվել է իրանցից: Որոնք թէով տան տուն տը-
ւել են աւաղին օրինակը: Գաղթելու համար որոշ-
ված են երկանի նախնիքը և նոր նվաճված երկր-
ները: Գաղթականները պատմում են նայելով, սովի
նրանցում ամենաստատիկ դեր է խաղում, և վա-
նից ստացած դրամական օգնութիւնը անշնչա-
ժառանգութիւն է արել նրանց: Սա մի կողմից, հա-
րատահարութիւնները միւս կողմից հարկադրեցին
թողնել հայրենիքը՝ չը նայելով և Պօլտոյ և կար-
նոյ աղբայրներին թախանձադին համոզմանց,
որոնց հետ դրաւոր յարաբերութիւններ են ունե-
ցել: Գաղթականների դժգոհութիւնը դէպք իրանց
աղանիքը—այդ անձնական շահախնդիր առաջ-
նորդները, հասնում է վերջին ծայրահեղութեան,
խոսում են մի առանձին պարտաւանդով նրանց
անտարբերութեան և թուրքահաճող լինելու վրա,
—խոսքը սարգիսների և նրա նման աղանիքի վրա
է. խոսում են նաև վանից ստացած դրամական
օգնութեան մէջ պատահած անկանոն բաժանման
վրա առանց մերձաւորապէս իմանալու իւրաքան-
չիւրի կարօտութիւնը, և թէ գաղթականութիւնը
որ առանց աղբայր չի մնալ Աղաչկերտից վրա,
տեղի չէր օգնել, և թէ նրանք դրամի փոխարէն
հաց ստանային, որովհետև չունենալով բեռնակրա-
կան ուժ, ուրիշ տեղերից հայթայթել անձամբ չէն
կարողացել: Ահա թիւրքայի Հայաստանում ար-
հեստական ձևով մտցրած սովի արդիւնքը, թիւր-
քայի այդ քաղաքականութեան վրա մի որոշ գա-
ղափար ևս կազմելու համար, լրացնելով թւած
գաղթականութիւններից ի բաց, դէպքը ստիպել
է Թալի գիւղ մի ուրիշ նոյնանմանի վրա, որի մա-
սին դեռ լրացնելու ոչինչ չէ երևացել: 1863
թվականում Տաճկաստանի Հայաստանից, խորհր-
դու նախնիքից մոտաւորապէս 800 գերդաստան
չարժվելիք իրանց տեղերից Ռուսաստան գաղթե-
լու համար. նրանք եկան մինչև կարս, որտեղից
կրկին յետ վերադարձան իրանց բնակութեան տե-
ղերը համոզմամբ հանգուցեալ Մատթէոս կաթօլ-
ղիկոսի և կարսի առաջնորդարանի: Այդ ժամանա-
կը թիւրքայի կառավարութիւնը նրանց էր այդ
գաղթականութեան վրա, այնպէս որպէս թէ չէ
տեսնում և նրա պաշտօնականներից ոչ մէկը, խա-
բերելից սկսած մինչև ի կարս փորձ անգամ չը
փորձեց իրանց աշխատասէր և հոյ հպատակների
գաղթականութիւնը արգելելու, այլ ծածուկ աշխա-
տում էին որ մի օրով առաջ անցնեն սահմանա-
ցուցի: Մեծ եղաւ կառավարութեան զայրույթը,
երբ գաղթականները վերադարձան իրանց տեղերը,
—տիրելու իրանց հայրենի ժառանգութիւնը: Դա
հենց էն ժամանակներն էր, երբ նա՝ ապսիքն Տաճ-
կաստանի կառավարութիւնը ուզում էր Հայաս-
տանը բնակեցնել Ռուսաստանից արաքսոված
վայրերի չեղքեցնելով: Գաղթականներից միայն մի
տուն յետ չը գնաց և մինչև հիմայ էլ բնակվում
է Ռուսաստանում նրան հպատակ դառած:

Երկի Պետրոսեանց

ՆԱՄԱԿ ԱԼԷԿՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ

Վաշակ, Բայազէզի և Աղաչկերտի սովատա-
նիքի համար հաւաքած պ. Վարդան Ստեփանեա-
նի և պ. Պօլտոյ վանեցեանի ձեռքով:
Սարգիս Բաշկեանի 1 ր., Պօլտոյ վանեցեան 5
ր., Մահտեսի Մկրտիչ Զալալեան 2 ր., Սիմեոն
Զալալեան 1 ր., Հայ ոմն 1 ր., Արամ Մատա-
կեան 3 ր., Հայ ոմն 1 ր., Գեորգ Սանդեանց 2
ր., Մնացական Ղլըճեան 1 ր., Սարգիս Շաթի-
րեան 5 ր., Կարապետ Տիգրանեան 10 ր., Տ.
Մահտեսի Մարիամ Զալալեան 3 ր., Տ. Մարիամ
Վանեցեան 3 ր., Տ. Վարդապետիկեան 3 ր., Մի-
քայի բարեխիւր Թիկեանց 23 ր., Խաչկերտի եղ-
բայր 5 ր., Յովհաննէս Բաբայանեան 1 ր., Գրի-
գոր Միմեոնեան 2 ր., Աղաչեան մահտեսի Գովհան-
նէսեան 3 ր., Յարութիւն Նալեան 3 ր., Սարգիս
Յարախանեան 1 ր., Արաբաճաճ Սեփարեան 1 ր.,
Նաղարէթ Փէշտիմալեան 1 ր. 50 Կ., Երզնի
Ջիւանի 1 ր. 50 Կ., Յակովբ թուրքոյեան 1 ր.,
Աւետիք Ղազարեան 1 ր., Մկրտիչ Գործակալեան
1 ր., Խաչատուր Կոտեղեան 1 ր., Գալուստ
Վարսավրեան 1 ր., Կարապետ Թուրքեան 1 ր.,
Ոմն 1 ր., Յովհաննէս Կոտաբեան 5 ր., Յակովբ Ջի-
լեկերեան 3 ր., Գրիգոր Վերելեան իւր գերտա-
տանի կողմից 50 ր., Գալուստ Աղաբեան 2 ր.,
Միլեոն Ջիւանեան 50 Կ., Ալեքսանդր Տէր-Սարգ-
սեան 2 ր., Կարապետ Սեփեան 1 ր., Աւետիս
Վանեցեան 3 ր., Գալուստ Մանուկեան 1 ր.,
Խաչատուր Երանոսեան 3 ր., Տ. Մարիամ Զալա-
լեան 60 Կ., Տ. մահտեսի Շողեր Կոտաբեան 1 ր.,
70 Կ., Յակովբ Պետրոսեան 3 ր., Անտոն Սե-
փանեան 1 ր., Աւաթըն փէհրիկեան 1 ր., Օհան

Գուրթեան 1 ր., Մկրտիչ Սարաֆեան 1 ր., Կա-
րապետ Սարաֆեան 2 ր., Գրիգոր Ստեփանեան 1
ր., Մահտեսի Մկրտիչ Նալալեանեան 1 ր., Կա-
րապետ Սանդեան 3 ր., Գրիգոր Լազարով 1 ր.,
Հաճիկապ Միսանեան 2 ր., Աղան Խաչատուրեան
1 ր., Խաչատուր Յակովբեան 1 ր., Յարութիւն
Գէօնեան 1 ր., Կարապետ Վանեցեան 1 ր.,
Մահտեսի Մկրտիչ մահտեսի Պօլտոյեան 1 ր.,
Գալուստ Կիրակոսեան 1 ր., Յովհաննէս Հէթի-
մեան 1 ր., Աղապապ մահտեսի Կարապետեան 5
ր., Գեորգ Սողոյեանց 1 ր., Եգոր Գալանթարեանց
2 ր., Պօլտոյ Ալիպալեանց 3 ր., Պետրոս Գեան-
տարեան 2 ր., Յարութիւն Ստաբուրեանց 1 ր.,
Ալեքսանդր Յովհաննէսեանց 10 ր., Վարդան Ստե-
փանեանց 3 ր. 20 Կ.: Ընդամենը 214 րուբլի:

Աբ. Յովհաննիսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՐԻՆ

Գորի, 12 յունիսի

Հրատարակելով «Մորեխ» և նորա ոչնչացնելու
միջոցները բրոշուրայի վրացերէն թարգմանութիւնը
յօդուտ վաճառ սովելոց, յանձնաժողովս մտադիր
է այս օրերս վրաց լեզուով տպագրած առանձին
նամակների հետ ուղարկել իրան ծանօթ ազգայնոց
նոյն բրոշուրների քանի մի օրինակներ այն մտքով, որ
փողերը, առ իւրաքանչիւրն ըստ կօպէկ հաշուելով,
հասուցանեն յանձնաժողովի կողմից թիֆլիսում
ընտրված մարզուս, որի անունը կը լինի ինչպիսի
նոյն իսկ նամակում, — իսկ զրբերը ձերպալէս բա-
ժանեն աղքատ դասակարգին, մասնաւոր գիւղա-
ցուց: Բայց որպէս զի նոյն վրացերէն նամակի
բովանդակութիւնը ամենքին հասկանալի լինի, խն-
դում ենք խմբագրութիւնից նրա հայերէն թարգ-
մանութիւնն ևս, որ սորա հետ ուղարկվում է,
տպագրէք ձեր լրագրի աւաղիկայ համարում: Ան-
դամ յանձնաժողովի Ստեփաննոս աւագ քահանայ
Տէր-Ստեփաննեանց:

Երբ այս տարի Հայաստանից ստացվեցաւ ուս-
սաց կօնսուլ պ. Կառնարականի հեռագիրը առ
այն, թէ—«Վանի մէջ և նորա շրջակայ գիւ-
ղերում սովը օրէցօր սաստկանում է, հարկաւոր
մանկը մանուկներ փողոցների վրա ընկած են մեղ
և քաղցած: Աղբալում 150-ի չափ սովից զոհ ե-
ղածների դիակները տակաւին չեն թաղված. եթէ
չուտափողով օգնութիւն չը հասցնէք—Հայաստանը
կորած է,» մտքով աշխարհը յայտնեց իր մարդա-
սիրական զգացմունքը: Ի միջի այլոց և Գորսու հա-
սարակութիւնը, առանց խտրութեան ազգութեան
և դասանութեան, մի այնպիսի քրիստոնէական
կարեկցութիւն արծարծեց, որ քանի մի օրվայ մի-
ջոցում յաջողվեցաւ մեզ հաւաքել 1200 րուբլի
նուիրատուութիւն:

Իսկ այսօր Հայաստանից ստացած, թէ մասնա-
ւոր և թէ պաշտօնական տեղեկութիւնքը աւելի
սարսափելի են — սովին հետեացել է տարա-
փոխիկ հիւանդութիւն և տաճիկների անտանելի
հարձանքը: Ահա թէ ինչ է գրում սորա մասին
ուսուսաց «Петербургскія Вѣдомости» նշանաւոր
լրագիրը—«Վանից նոր ստացված հեռագիրը թէև
կարճ, բայց ազգու կերպով հաղորդում է.—
«Թուրքերը կողոպտում և սպանում են հայերին:
Սարսափը պատել է ամենքին: Միթէ հայ լինելը
յանցանք է: Ոգնեցէք մեզ»:

Այս ամենը աչքի առաջ ունենալով, Գորսու
յանձնաժողովը հարկաւոր է համարում իր գործու-
նէութիւնը տակաւին ևս շարունակելու. և այսօր,
ի միջի այլոց միջոցաւ օժանդակութեան, աշխա-
տանք իր անդամ Տէր-Ստեփաննեանց Ստեփան-
նոս աւագ քահանայի, հրատարակեց «Մորեխ» և
նրա ոչնչացնելու միջոցները կոչված բրոշու-
րայի վրացերէն թարգմանութիւնը, որից ուղար-
կելով ձեզ այսչափ օրինակ այսչափ րուբլու
արժողութեամբ, յարգանք խնդրում ենք—փողերը
հասուցանել յանձնաժողովս, իսկ զրբերը ձերպալէս
բաժանել աղքատ դասակարգին, մասնաւոր գիւ-
ղացոց, որով և կը տաք նոցա միջոց—հաստատ
և արդիւնաւոր կերպով մաքաւելու իրանց առեւ-
ել թէնամուտ դէմ—Սորա հետ ի միասին—Հա-
յաստանի հարկու հաղարաւոր բնակիչներն ևս ա-
զատած կը լինէք սովից և կանխաժամանակեալ
մահուանից:

Յանձնաժողովի անդամներ—Ստեփաննոս աւագ
քահանայ Տէր-Ստեփաննեանց, Գրիգոր Ամիրեանց,
Ջաբրիա Տէր-Միսանեանց, Կինադ Նիկոյ Դիա-
սամիճէ, Գալուստ Ստեփաննեանց, Գրիգոր Թու-
թիւնեանց, Աղալոյ Թուրքայեանց, Գեորգ Ռոսա-
նեանց:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նորերումս վախճանվեցաւ Թիֆլիսի ՍՈՒՍՏՈՒՄ տոհ-
մական պատուաւոր քաղաքացի Եագոր Մոփէսեան
Տէր-Արաքսեանց: Հանգուցեալը կտակեց յօդուտ
Թիֆլիսի ազգային հայոց ծխական դպրոցների
1000 րուբլ, յանձնելով այդ գումարի կարգադրելը
Գաբրիէլ Սունդուկեանցին: Նոյնպէս հանգուցեալը
կտակել է մի գետին, որ գտնվում է Շառուռե-
ցոց ս. Աստուածածնի եկեղեցուն կից յօդուտ նոյն
եկեղեցու: Թէև գումարը մեծ չէ, բայց շատ ու-
րախի է որ Սունդուկեանցի պէս մարդուն է յան-
ձնված կտակի կատարելը: Յանկալի կը լինէր որ
և աւելի խոշոր գումարների կտակակատարներ
նշանակվէին Սունդուկեանցի պէս անձինք. այն
ժամանակ հաստատ կարելի էր տեսլ որ կտակող-
ների գումարները չէին կորչի, ինչպէս գումարնե-
րից շատերը կորան, յանձնված լինելով կասկա-
ծաւոր ազնուութեան տէր մարդիկներին:

Ինչպէս յայտնի է նորերումս ՄՍՍԿԱՅՈՒՄ
ուսու երեւելի բանաստեղծ Պրոշկինին արձան
կանգնեցրին: Մայրաքաղաքների բոլոր քաղաքները
ի են արձանի բացման հանդիսի նկարագրութեամբ
և նոյնպէս յօդուածներով Պրոշկինի նշանակու-
թեան մասին ուսու գրականութեան համար:

Ստացանք յօդուտ վանի սովատանջների մի
թիֆլիսեցի անյայտ պարոնից 3 րուբլ:

Յունիսի 11-ին Արծրունու թատրոնում վրաց
թատրոնական խումբը ներկայացրեց պ. Ա. Մե-
րետելիի «Եկնտա» պիեսան: Հասարակութիւնը մեծ
համակրութեամբ ընդունեց երիտաւարը հեղինակի
պիեսան:

Անձրեային եղանակը շարունակվում է Թիֆլի-
ՍՈՒՄ և նրա շրջակայքում: Մեզ գրում են Կով-
կասի շատ տեղերից, որ այս տարի անձրևները
ամեն տեղ առատ են:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻՍԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԸ

Մայիսի 30-ին անգլիական լորդերի ժողո-
վի նիստում, լորդ Կարնարվոն Հարցառաջար-
կեց թէ ինչ միջոցներ են գործ դրվել Թիւրք
կառավարութեան կողմից՝ Հայաստանում տի-
րող թշուառութիւնը թիթեւացնելու հա-
մար: Այժմեան դրութեան վտանգը դրա
մէջն է կայանում, ասաց լորդ Կարնարվոն, որ
սովը և չքաւորութիւնը սպառնում են մի
ամբողջ ցեղ ոչնչացնելու: Լորդի կարծիքով
անհրաժեշտ է մի քրիստոնեայ նահանգապետ
նշանակել Հայաստանում, լիազօր իրաւունք
տալով նրան կամ ամբողջապէս, կամ մասամբ
գործ դնելու տեղական պետքերի վրա երկրի
արդիւնքները: Լորդ Գրենվիլ պատասխանեց,
որ անհրաժեշտ է որոշել Թիւրքաց կառավա-
րութեան ձեռքով գործադրվող միջոցները
թշուառութեան տարածման և առաջն
առնելու դիտաւորութեամբ, մի երկրի մէջ,
որի ոյժերը սպառվեցան պատերազմի, երաշ-
տութեան, վատ կառավարութեան շնորհիւ և
ուրիշ պատճառներով: Մի հաստատ բարե-
նորոգում Հայաստանը կարող էր սպասել մի-
միայն կառավարչական ձևի փոխվելուց: Բ.
Դուռը կօմիսարներ նշանակեց, բայց նրանց
ներկայացրած զեկուցումները ոչ ոքին յայտնի
չեն: Յայտնի չէ, նոյնպէս, արգեօք Բ. Դուռը
հետեւեց մասնաժողովների խորհրդներին: Այդ.
պատճառով անգլիական կառավարութիւնը
հրաւիրում է եւրօպական պետութիւններին,
աջակցել իրան Բերլինի դաշնագրի մի բանի
չը կատարված կէտերի իրազօրծելու մէջ:
Մարկիզ Սալիսբուրի ասեց որ տէրութեան
ջանքերը համակրութեամբ են ընդունվում
ամենքից, որովհետև ամենքը ցանկանում են
Թիւրքայի թշուառ ազգութիւնների դու-
թեան բարւոքում, բայց կասեց յայտնեց
այդ ջանքերի աջող հետեւների մասին: Հեր-
ցօգ Արգայլ պատասխանեց, թէ նախկին մինիս-

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախում էն օլեգրաֆիական պատկերներ 20% զեղումով փրարկումներ 6—10 ր., խոզանակներ պալմենիտի քանակներ 4 ր., ծեֆիլի քանակներ 3—20 ր. դիմիտ, բրիտանական մետաղի թէյաններ 30 ր., 3 ր., ցիտրատ-մազնեղի, թիւրքական շերքէթ և ծարաւ Բաղնիկի նիւթ 70 ր., ամենալաւ պորտֆէյն և խերս 1 ր. 40 ր. շէշ, շամպայն 3 ր. շէշ:

10—20

«ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆ» պատկերազարդ հանդիսի ներկայ ամի երկրորդ տետրն կը հրատարակուի յառաջիկայ յուլիս ամսոյ սկզբում և կը բովանդակէ իւր մէջ, ի միջի այլոց նաեւ Հ. Մաղաքիա թ. վարդապետի Օրմանեան, Գաբրիէլ արքեպիսկոպոսի Այվազեան, Միքայէլի Միւսահարեանց և այլոց պատկերներն: Բաժանորդներն շարունակելով է: Տարեկան գինն է 2 րուբլի արծ. կանխիկ վճարելի:

Հրատարակիչ Զարմայր Մսերեանց

10—10

Համեմատեցէք անգլիական խանութի թէյն զնով 1 ր. 10 ր., 1 ր. 20 ր., 1 ր. 40 ր., 1 ր. 60 ր., 1 ր. 80 ր. Ֆուտի համար այն թէյներն հետ, որոնք ուրիշ խանութներում 30%—ով թանկ են ծախվում և այդ խանութի ֆուտի թուրքական թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէյն հետ:

11—100

ՄԵԿԵՐԻՏԱՍԱՐԴ, որ գիտէ հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն լեզուներ, կամենում է կԼԵՏՈՐԵԶԻԿԻ ԳՈՐԾԵԿԵՆՑԻ կամ թարգմանի տեղ ունենալ: Զանկացողները կարող են գիմել «Մշակ» խմբագրութեանը:

Ֆուտի 10-ից ամառային պարագմներ ների համար ընդունում են աշակերտներ: Հասցէն հետեւեալն է.
Элементарная школа, Вельяминовская улица, д. Аматыни.

ՀԱԳՈՒՍՏԵՐԻ երեխաների 4 ր., տղամարդկերանց 9—20 ր., ամբողջ հագուստը, պիշակ 5 ր., ռոշետ և ԾԱԽՎՈՒՄ. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ: Բամազէյ, պարուսին, արիֆ, դրապ, փոստի թուղթ, թաւիշ կառաքելի և կառաքելի համար, կարենիօր և այլն 25% ռուբլի տեղերից էժան: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ համեղ մուրաբաներ, կոնֆետներ, հազել գէմ, պանիր, մազնեղի, ամաններ, կարթուսի փօշի, սապօն, պարսկական փօշի և այլն: Այս բոլորը և ուրիշ շատ ապրանքներ կարելի է գնել ԱՄԵՆԱԼԻԿԱՆ գնեթով ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ:

11—20

ՀՕԿՈԼԵԹԻ ԵՒ ԿԱԿԱՍ Ֆրէյ և որդի, որոնք Փարիզի աշխարհահայտնի ժամանակ ունէին խոշոր, փրճապէս ստացվեցաւ. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ: Նոյն տեղ դարձեալ ստացվեցաւ թէյ մեծ քանակութեամբ: Շատ պատուական թէյ ֆուտը 1 ր. 20 ր., և 1 ր. 40 ր.

4—10

Тифлисская Городская Управа, назначивъ въ присутствіи своемъ торги на 18 число Іюня 1880 года: а) на устройство водослива противъ Колочей Балки и б) на производство работъ по сооруженію Гимназической трубы, приглашаетъ желающихъ взять эти работы съ подряда-явиться къ торгамъ въ 1 часъ дня. Кондиціи можно видѣть ежедневно въ Управѣ отъ 10 часовъ утра до 2 часовъ по полудни.

1—3

ԲԵԱԼԱԿԱՆ դպրոցի 6-րդ դաստանն ԱՅԱԿԵՐՏ ցանկանում է մասնաւոր ԳԱՍԵՐ ՌԵՆՆԱՅ և ՊԱՏՄԱՍՏԵԼ երեխաներին այդ դպրոցի ջԱՆԱԶԱՆ ԳԱՍՏԱՆՈՒՆԵՐԻ համար: Հասցէն «Մշակ» խմբագրատանը:

1—2 (2)

Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան վարչութիւնը պատիւ ունի յայտնել, որ արդէն դուրս եկան մասնաւոր տակից և ծախվում են Թիֆլիսի բոլոր գրականութեան մօտ ընկերութեան տպագրութիւնները:

№ 4 ԲԵԶԵՐ-ՍՏՈՒՆ. ԹՈՎԱՍՍ ԵՂԲՈՐ ՏԵՍԱԿ, փոխ. երեխաների համար Պարմէր, Թարգ. օր. Ն. Տէր-Մարտիրոսի: Պատկերազարդ և կազմած—60 ր.:

№ 5 ՄՈՐԵՆԻ ԵՒ ՆՈՐԱՆ ԶՆԱՅԼՈՒ ՀՆԱՐՆԵՐԻ. աշխ. Տէր-Բարսեղեանցի: Գինն է 10 կոպէկ:

Օտարաբաղաճացի կարող են գիմել հետեւեալ հասցեով: Въ Тифлисъ, Тифлисское Общество изданія армянскихъ книгъ.

ԲԺՅԱՆՈՑ

ՀԻՒՆԵԿԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՈՏԵՐՆ 9-13 ՄԻՆՈՒՆԻ 1 ԺԱՄԱՆ:

Երկուշաբթի. Գաղթականի կանանց հիւանդ. Գօրալի վիշ ներքին հ. Բօտիւնեանց կանանց և երեխաների հ. Բիւլեւանց խորհրդական և աշքերի հ. Ետեմօրսի վիշերական և կաշու հ. Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Միւսիկ վիշ խորհրդական հ. Վ. Գօրով վիշերական և բողազի հ. Բէյլի աշքի հ. Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ. Կրասնօզլի աշքի, Լիւսիցեի և Վ. Բիւլեւանցի հ.:

Չորեքշաբթի. Լիւսիցեի և Բուրգովի վիշերական հ. Ետեմօրսի վիշերական և կաշու հ. Աստուածատու րօվ կանանց հիւանդութիւններին:

Հինգշաբթի. Վ. Գօրով վիշերական և բողազի հ. Բօտիւնեանց կանանց և երեխաների հ. Լիւսիցեի և Վ. Բիւլեւանցի հ. Բիւլեւանցի սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գաղթականի կանանց հ. Միւսիկ վիշ խորհրդական հ. Կրասնօզլի և Բիւլեւանցի հ. Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ. Ետեմօրսի և Աստուածատու րօվ վիշերական և կաշու հ. Բաբայեան ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիւսիցեի և Վ. Բիւլեւանցի հ. Կրասնօզլի և Բիւլեւանցի հ. Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ. Ետեմօրսի և Աստուածատու րօվ վիշերական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վ. Գօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբայեան չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևկա կայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առաւմարտ 0 ր. և իւր աղքատ հիւանդներին բժշկանոցի տնայնով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում ընդունում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի գիրկնոր Լիւսիցեի:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԳԼԽԱՌ ՊԱՀԵՍ

Ի Ի Լ Ի Ի Հ Ե Ն Ի Ի Ի Յ Ի Մ Ե Ի Մ Ա Ն Ի,

Ս. ՊԵՏԵՐՈՎԻԿ, ԲՈՒՀԱՅԱ ՄՈՐԱԿԱՅԱ, № 42

Առաջարկվում են արտասահմանի ամենալաւ գործարաններից նորերում ստացված երաժշտական գործիքներ:

ԶՈՒԹԱԿՆԵՐ 2 1/2 ր., 5 ր., 6 ր., 8 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 50 ր., 60 ր. և աւելի թանկ մինչև 150 ր., ԿԵՏՆՈՑՆԵՐ (ՏՄԵՇԵԿ) 50 ր., 1 1/2 ր., 2 ր., 3 ր., 5 ր., 8 ր., և աւելի թանկ մինչև 25 ր., ԱՐԿԼՆԵՐ 2 1/2 ր., 5 1/2 ր., 6 ր., 7 ր., 10 ր., և աւելի թանկ մինչև 20 ր.: Հին իտալական և գերմանական ջութակներ մինչև 600 ր.: ԶՈՒԱԿՆԵՐ փոքր դիրքի երեխաների համար 2 ր. 50 ր. մինչև 30 ր.: Զուգակի չկայա (ինքնուսուցիչ) 2 ր., 3 ր., 4 ր., 5 ր.: ԱԼՏԵՐ 9 ր., 15 ր., 25 ր., 50 ր. և աւելի թանկ: ՎԻՈԼՈՆՉԵԼՆԵՐ 20 ր., 30 ր., 40 ր., 60 ր., 100 ր. և աւելի թանկ մինչև 600 ր.: Վիոլոնչելի չկայա 4 ր.: ԿՈՆՏՐԱՍՈ 45 ր., 65 ր., 120 ր. և աւելի թանկ: ԳԻՏԱՐ 3 ր., 50 ր., 5 ր., 15 ր., 20 ր., 40 ր., 50 ր. և աւելի թանկ մինչև 100 ր.: Գիտարի չկայա (ինքնուսուցիչ) 1 ր. 50 ր., 2 ր., 3 ր.: ՅԻՏԲԱՆԵՐ 14 ր., 16 ր., 25 ր., 35 ր., 50 ր. և աւելի թանկ մինչև 100 ր.: Յիտարի չկայա 2 ր., 3 ր., 50 ր., նոտաներ 40 ր., 60 ր., 90 ր. իւրաքանչիւր տետրակը: ՄԱՆԴՈԼԻՆ 10 ր., 20 ր., 30 ր., 40 ր., և աւելի թանկ. չկայա 3 ր.: Ամենալաւ իտալական ԼԱՐԵՐ այդ գործիքների համար, ԿԱՄԵՐՏՈՆ 40 ր., 50 ր., 1 ր., 50 ր., 2 ր., 6 ր.: Սուրբին կանիֆոլ և ալ պատկանելիք: ՄԵՏՏՐՈՒՄ 8 ր., 12 ր.: Երկաթի ծալիկ ՊԻՊԵՏԵՐ 5 ր.: Երկաթի ծալիկ պիւպետներ մոմականերով 6 ր., 8 ր.: Գերմանական ԳԱՐՄՈՆԵՐ 4 ր., 4 ր. 50 ր., 5 ր. 50 ր., 7 ր. 50 ր., 10 ր., 15 ր., 20 ր., 24 ր., 30 ր., 40 ր., և աւելի թանկ: Գարմոնայի չկայա և նոտաներ 50 ր., 75 ր., 1 ր., 1 ր. 50 ր., իւրաքանչիւր տետրակը: ԿՈՐՆԱՊԻՆԱՊԻՍԱՆ 18 ր., 25 ր., 30 ր., 40 ր., 60 ր. և աւելի թանկ մինչև 100 ր.: Դիտարի (ինքնուսուցիչ) 1 ր. 50 ր., 4 ր., 5 ր.: ԱԼՏԳՈՐ, ՆԵՍԱՄՈՒՄԵՐ, ՏՐՈՒՐՈՆԵՐ, ՖԼԵՏՏԱՆԵՐ 3 ր., 5 ր., 7 ր., 10 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 40 ր., 60 ր. և աւելի թանկ: Դիտարի (ինքնուսուցիչ) 1 1/2 ր., և 3 ր., նոտաներ 40 ր., 1 1/2 ր., 3 ր.: Իւրաքանչիւր տետրակը: ՎԼԱՐՆԵՏԵՐ 6 ր., 8 ր., 10 ր., 15 ր., 20 ր., 30 ր., 40 ր., և թանկ մինչև 60 ր.: Կարնետի չկայա 4 ր., Բեկօթ, Չականի, Ֆլաուտներ: Անգլիական ԿՈՆՏՐԱՍԻՆՈ 30 ր., 38 ր., 45 ր., 55 ր., 70 ր., 100 ր. և թանկ մինչև 160 ր.: Դիտարի 3 ր., նոտաներ 50 ր., 75 ր., 1 ր., 1 1/2 ր., Գերմանական կոնցերտինո 3 ր., 4 ր., 5 ր., 8 ր., 10 ր., 12 ր., 15 ր., և թանկ մինչև 30 ր.: Դիտարի (ինքնուսուցիչ) 75 ր., նոտաներ 40 ր., և 1 ր.: Իւրաքանչիւր տետրակը: Երաժշտական արկղեր 2 ր., 4 ր., 6 ր., 10 ր., 25 ր., 30 ր., 40 ր., 55 ր., 75 ր., 90 ր., և թանկ մինչև 200 ր.: ՖԻՍԿԱՐՄՈՆԵՐ 90 ր., 100 ր., 120 ր., 150 ր., 175 ր., 250 ր. և աւելի թանկ: ԳԱՐՄՈՆԵՐ ՖԼԵՏՏ 40 ր., 45 ր., 60 ր., 75 ր., 90 ր.: ԳԱՐՄՈՆԵՐ Ֆլուտի ՕՐԳԱՆՈՎ 175 և 225 ր.: ԵԱՐՄԱԿԱՆ 8 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 40 ր.: Իտալական չարմանկաներ 150 ր., 200 ր., 250 ր.: ՕՐԳԱՆԵՐ թաշտների համար 10 ր., 15 ր.: Թմբուկներ, լիտակներ, բուռնիկներ, բանդոնիոն, մետաղական ջրհորների բեկաներ, եռանկիւններ, գարմոններ և այլն:

Օտար քաղաքներից ստացված պատուէրները կատարվում են անյապաղ և ճշգրիտ: Զանազան քանակութեամբ գնողին է՛ւ՛շախվում են հատով և մեծ քանակութեամբ:

1—1

Յովսէփ Տէր-Մովսէսեան Տէր-Աբրահամեանցը ցաւօք սրտի յայտնում է իւր ազգականներին և ծանօթներին իւր եղբոր ամուսնական պատուաւոր քաղաքացի ԵԱԳՈՐ ՏԵՐ-ԱՐԲԱՆԻՍ ՄԵՆԱՆԻ աղայի մահը, խնդրելով պատուել հանգուցեղոյն յիշատակը և ներկայ գտնուի յուզարկուողութեան հանդէսին, որ լինելու է Շաբաթ օրը ամսոյ 14-ին առաւօտեան 10-ժամին: Հանգուցեղային տանելու են իւր սեփական տանից, որ գտնվում է Հաւալարի Մէլլանի մօտ Շամբորեցոյ Սուրբ Աստուածածնայ եկեղեցին

2—3

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ցանկանում է այս ամառփայ արձակուրդներին ընտանիքի հետ ամառանոց գնալ ուսուցչի պաշտօնով: Կարող է պատրաստել երեխաներին բոլոր ծխական և միջնակարգ ուսումնարանների առաջին երկրորդ և երրորդ դասարանց համար, (բացի դասական լեզուներից) կամ պարսկերէն մանուկների հետ, և ուսուցանել հայոց և ռուսաց լեզուներ: Թէ աշակերտներին և թէ չափահասներին: Նմանապէս կարող է ցանկացողներին ուսուցանել և իրաց լեզուն:

Հասցէն կարելի է իմանալ «Մշակ» խմբագրատանը. ցանկացողներին խնդրում եմ վաղօրօք յայտնել իւրեանց պահանջը:

2—5

ՎԵՐՁՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ
Հրացաններ, թիւղիկներ, դանակներ, դրէներ, անուշահոտութիւններ, սապօն, դուրյաներ, թաշկինակներ և այլն, ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱՋԻՆՈՒՄ:

2—20

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է Զաք. Գրիգորեանցի «Ուղիղտեան գրա-վաճառանոցում» Ընդհանուր աշխարհագրութիւն, Ա. տարի, Նախագիտելիք (Հայրենագիտութիւն Թիֆլիսի) 5 պատկերներով. Աշխատասիրութիւն Ն. Սիմէոնեանց: Գինն է 35 կոպ. գումարով առնողներին 20% զեղում կը լինի:

Մամուլի տակ են, Ընդ. Աշխ. Բ. տարի, մասն ուսումնական (մատենատիրական) և Բնական և ընդ. Աշխ. Գ. տարի, մասն քաղաքական: Վերջին երկու գրքերի տպագրութիւնը աւարտելուց յետոյ կը հրատարակուեն նոցա գները: Օտար քաղաքացիք դիմում են:

Յ. Թիֆլիս. Кавказская книжная торговля З. П. Грикурова.

3—20

Выпелъ изъ печати и поступилъ въ продажу VI томъ „Сборника свѣдѣній о Кавказѣ“, изданія Кавказскаго Статистическаго Комитета, содержащій въ себѣ:
«Тифлисъ по однодневной переписи 25-го марта 1876 г.»

всего 570 страницъ in 4, съ 19-ю приложениями, а именно:

- 1) 15 литографированныхъ раскрашенныхъ графическихъ таблицъ;
- 2) 2 вида Тифлиса: по Шардену (1671 г.) и Турнефору (1701 г.);
- 3) копія съ плана Тифлиса по царевичу Вахуштѣ (1739 г.);
- 4) планъ современнаго Тифлиса.

Продажа производится въ книжныхъ магазинахъ: Беренштама, Кавказской книжной торговли и Центральной книжной торговли. Цѣна 4 руб. сер.; на пересылку прилагается за 5 фунт.